ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2022թ. N --- -Ա

ՈՐՈՇՈՒՄ
ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան համայնքի սեփականություն համարվող սույն որոշման հավելվածում նշված երաժշտական գործիքները, ընդհանուր 7611.0 հազ. դրամ հաշվեկշռային արժեքով, նվիրաբերել Արցախի Հանրապետությանը՝ ի դեմս Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Արցախի Հանրապետության երաժշտական և արվեստի դպրոցներում օգտագործելու նպատակով:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ կնքել նվիրաբերության պայմանագիր:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
« » -------- 2022թ. h. –Ա որոշման

ՑԱՆԿ
Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նվիրաբերվող երաժշտական գործիքների

Հ/հ	Երաժշտական գործիքի անվանումը	քանակ	Ընդամենը հաշվեկշռային արժեք /հազ. դրամ/
1	Ջութակ 1/4	3	174.0
2	Ջութակ 2/4	4	232.0
3	Ջութակ 3/4	3	180.0
4	Թավջութակ 3/4	1	360.0
5	Կլարնետ	2	1130.0
6	Շեփոր	2	296.0
7	Քանոն	5	1120.0
8	Հարվածային գործիքների հավաքածու	2	1110.0
9	Սաքսոֆոն տենոր	1	410.0
10	Թառ	2	370.0
11	Սանթուր	2	600.0
12	Քամանչա	4	640.0
13	Դհոլ	10	580.0
14	Կիթառ	10	409.0
ԸՆԴԱՄԵՆԸ		51	7611.0

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունումը պայմանավորված է Արցախի Հանրապետության մշակութային կազմակերպությունների, մասնավորապես՝ երաժշտական և արվեստի դպրոցների բնականոն գործունեության ապահովման, դպրոցների նյութատեխնիկական բազայի արդիականացման, Արցախի Հանրապետությունում գեղարվեստական կրթության որակի բարելավման, օժտված և տաղանդավոր, ինչպես նաև սոցիալապես անապահով արցախցի երեխաների համար արտադպրոցական ուսման նպաստավոր պայմանների ապահովման անհրաժեշտությունից ելնելով: Որոշման ընդունմամբ հնարավորություն կընձեռվի Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող, Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեի «Գույքի ձեռքբերում և նվիրատվություն Արցախի մշակութային կազմակերպություններին» ծրագրի շրջանակում ձեռք բերված 14 անուն 51 հատ երաժշտական գործիքները նվիրաբերել Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մշակութային կրթության հաստատություններին, այդ թվում՝ Արցախյան պատերազմի հետևանքով ներկայում Ստեփանակերտ քաղաքում տեղակայված Հադրութ և Շուշի քաղաքների արտադպրոցական դաստիարակության հաստատություններին: Արցախի Հանրապետության երաժշտական և արվեստի 11 դպրոցներ է հաճախում շուրջ 2500 սովորող, և նվիրաբերվող գույքը էականորեն կբարելավի նշված հաստատություններում իրականացվող կրթադաստիարակչական գործընթացի որակը, կմեծացնի դրանց գրավչությունն ու կնպաստի Արցախի Հանրապետությունում մշակութային կրթության ոլորտի զարգացմանը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է ընդունել «Գույք նվիրաբերելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գույք նվիրաբերելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գույք նվիրաբերելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ